



Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01/04/2020 - 30/04/2020թթ. տվյալների ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 01-04-2020թթ. - 30-04-2020թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 1,285 բողոք, որից ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 1,234-ն են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 1,234 բողոքներից 160-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ, և ըստ էության, չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ:

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-04-2020թթ. - 30-04-2020թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 722 պահանջ-դիմում:

Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝	1,285
Վերաբերում են ֆինանսական համակարգին՝	1,234
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	160
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	1,074
2.2 Ընդունվել են քննության, ուղղված են՝	722
2.2. 1. Բանկերի դեմ, կապված են՝	477
• Վարկային գործարքների հետ	275

• Վճարահաշվարկային գործարքների հետ	4
• Ավանդային գործարքների հետ	198
2.2. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝	190
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	9
• Առողջության ապահովագրության հետ	1
• Պատասխանատվության կամավոր ապահովագրության հետ	1
• Գույքի ապահովագրության հետ	1
• Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ	1
• ԱՊՊԱ-ի հետ	177
2.2. 3. Վարկային կազմակերպությունների դեմ	55

Գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների ելքեր (հատ դեպք)՝ [1]	630
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	211
Պահանջը մասնակի է բավարարվել	73
Պահանջը բավարարվել է	30
Պահանջը մերժվել է	202
Պահանջի քննությունը դադարեցվել է	91
Պահանջի քննությունը մերժվել է	23

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր